ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Վահե Սերգեյի Ավետիսյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

<<Վահե Սերգեյի Ավետիսյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ

1. Որոշման նախագծ 1-ին կետում Վահե Սերգեյի Ավետիսյանի ծննդյան տարեթիվը վերանայման կարիք ունի, քանի որ եթե վերջինս ծնվել է 1999 թվականին, ապա նրա տարկետման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ միայն 18 տարին լրանալուց հետո:

Միաժամանակ հայտնում ենք, որ ըստ նախագծի հետ ներկայացված հիմնավորման Վահե Սերգեյի Ավետիսյանը սովորում է Մոսկվայի <<ՄԻՖԻ>> Ազգային հետազոտական միջուկային համալսարանում, ուստի նախագծում անհրաժեշտ է նշել համապատասխան բուհի անվանումը, ինչպես նաև դրույթներ նախատեսել նշված բուհի բարձր վարկանիշ ունենալու վերաբերյալ՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1394-Ն որոշման պահանջները:

2. Որոշման նախագծի 2-րդ կետն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում գրավի պայմանագրի նոտարական վավերացման, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ գրավի իրավունքի պետական գրանցման պահից:>>, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1394-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի պահանջները, որի համաձայն օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններ ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ նրանց օրինական ներկայացուցիչները պարտավոր են կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հետ կնքել գրավի պայմանագիր:

ՀՀ արդարադատության
նախարարի առաջին տեղակալ՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ